Կամո

Կամո բնակավայրի վարչական տարածքը կազմում է 2418.08հա իսկ բնակչությունը 1455 մարդ: Կամո բնակավայրը գտնվում է Շիրակի մարզի հյուսիս-արևելյան հատվածում, ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է, զգալի է բրիզների ազդեցությունը: Խոշոր գետը Գավառագետն է: Բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից 12 կմ է: Բնակչությունը հիմնականում զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ: Մշակում են հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաներ, կարտոֆիլ, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ: Գյուղի հարավային մասում 1.5 կմ հեռավորության վրա է գտնվում Անտիկ բնակատեղի և դամբարանադաշտի տարածք, որը թվագրում է մ.թ.ա. 2-1 հազարամյակը: Այժմ գյուղում գործում է քարաշեն միջնակարգ դպրոց, մանկապարտեզ,փոստ, գրադարան, բուժկետ: